ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՅՈՒՂՈՒՄ (1965—1978 ԹԹ.)

ԻՍՐԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կուսակցության ու սովետական կառավարության մշակած և ժողովրդի հավանությանն արժանացած ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանների կատարումն ապահովելու գործում մեծ դեր է խաղում սոցիալիստական մրցությունը։ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը,—դրել է Վ. Ի. Լենինը,—այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են... ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[1]։ Լենինյան այս կանխատեսումը իրականություն դարձավ, և սոցիալիստական մրցությունն այժմ դարձել է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հզոր առաջմղիչ, մեծ չափով նպաստելով քաղաքի և գյուղի աշխատավորների սոցիալ-քաղաքական ակտիվությանը բարձրացմանը։

Ինչպես նշված է առաջին հնգամյակի 50-րդ տարեդարձի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, «Իրականության հեղափոխական վերակերտումները, աշխատանքի սոցիալական բնույթի փոփոխությունները կյանքի կոչեցին մի այնպիսի նոր հասարակական երևույթ, ինչպիսին սոցիալիստական մրցությունն է՝ մասսաների պատմական ստեղծագործությամբ ծնված և կոմունիստական կուսակցության կողմից գիտականորեն կազմակերպված աշխատանքային մրցակցության և ընկերական փոխօգնության հարաբերությունները»[2]։

Կուսակցության ժամանակակից ագրարային քաղաքականության կոնկրետ մարմնավորումն է գյուղատնտեսության վերելքի կոմպլեքսային ծրագիրը, որը մշակեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումը։ Այդ պլենումի կանխագծումների մեջ մեծ տեղ է հատկացված սոցիալիստական մրցության ծավալմանը։

Մարտյան պլենումի որոշումները Հայաստանի գյուղերում քաղաքական ու աշխատանքային ակտիվության վիթխարի վերելք առաջացրին։ Ծավալվեց համաժողովրդական լայն մրցություն՝ սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի, կուսակցության ու սովետական կառավարության առաջադրանքներին

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 493—494։

2 «Սովետական Հայաստան», 18. III. 1979։

կատարումը ժամկետից շուտ ապահովելու համար։ Այդ գործում ուղեցույց դարձավ Վ. Ի. Լենինի ցուցումն այն մասին, որ «մեզ մոտ մրցության կազմակերպումը սոցիալիստական սկզբունքներով պետք է լինի հասարակության վերակազմության առավել կարևոր և առավել շնորհակալ խնդիրներից մեկը»[3]։

Նպատակասլաց, գործարար մրցությունն արտադրական պլանների ժամանակին ու որակով կատարելու կարևոր գործոն է։ Ուսանելի է Ախուրյանի, Արարատի, Ստեփանավանի, Աշտարակի, Մասիսի, Շամշադինի, Նոյեմբերյանի, Կալինինոյի և այլ շրջանային կուսակցական կոմիտեների աշխատանքի դրական փորձը, կոմիտեներ, որոնք սիստեմատիկաբար զբաղվում են սոցիալիստական մրցության կազմակերպման հարցով և գործարար օգնություն են ցույց տալիս սկզբնական կուսկազմակերպություններին։ Այդ շրջաններում գյուղատնտեսության գրեթե բոլոր աշխատողներն ընդգրկվել են սոցիալիստական մրցության մեջ, որի ավանգարդում քայլում են կոմունիստները։ «Հաղթանակ» սովխոզը Նոյեմբերյանի շրջանի խոշոր տնտեսություններից է։ Այնտեղ տարեկան արտադրվում է ավելի քան 7.000 տոննա պտուղ և 650—700 տոննա խաղող։ Նախկին խոպանից հարուստ բերք ստանալու գործում իր ծառայություններն ունի Ս. Ասատրյանի ղեկավարած կոմունիստական աշխատանքի բրիգադը, որն այգեհատվածի յուրաքանչյուր հեկտարից տարեկան ապահովում է 170—175 ցենտներ պտղի միջին բերք[4]։ Գյուղատնտեսության ինտենսիվացմանը հասնելու համար մղվող պայքարում որոշակի հաջողությունների է հասել նաև Ախուրյանի շրջանի Արևիկ գյուղի կոլտնտեսությունը, որը 1964 թ. մարտին, Հայաստանի գյուղատնտեսության պատմության մեջ առաջինը, արժանացավ կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի բարձր կոչման[5]։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության արագ աճի և կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային բարձր մակարդակի ապահովման համար 1964 թ. կեսերին Շահումյանի շրջանի Ներքին Զարբախի Վ. Ի. Լենինի անվան և Նոր Կյանք գյուղի Ղտրիբջանյանի անվան կոլտնտեսությունները ևս արժանացան կոմունիստական աշխատանքի տնտեսության բարձր կոչման[6]։

Սոցիալիստական մրցության նպատակասլաց կազմակերպումը միշտ բեղմնավոր արդյունքներ է տալիս։ Օրինակ, հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատանքի արտադրողականության բարձրացումը, 1965 թ. համեմատությամբ, 1970 թ. հետևյալ պատկերն է ունեցել (մեկ աշխատողի տարեկան միջին վաստակի հաշվով, տոկոսներով)[7]։

Տարիներ	Կոլտնտեսություններում	Սովխոզներում
1966 թ.	99	102
1970 թ.	129	138

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 243։

4 Տե՛ս Նոյեմբերյանի շրջանի «Հաղթանակ» սովխոզի 1966—1970 թթ. տարեկան հաշվետվությունները։

5 «Սովետական Հայաստան», 28. III. 1964։

6 Նույն տեղում, 19. VII. 1964։

7 «Народное хозяйство Арм. ССР на 1974 г.», Ереван, 1975, էջ 71։

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 8-րդ հնգամյակի տարիներին աշխատանքի արտադրողականությունը սովխոզներում աճել է 36, իսկ կոլտնտեսություններում՝ 28 %-ով։

Սոցիալիստական մրցության դրական արդյունքները երևում են հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատանքի արտադրողականության աճի հետևյալ տվյալներից (մեկ աշխատողի տարեկան միջին վաստակի հաշվով, 1970 թ. համեմատությամբ, տոկոսներով)[8].

Տարիներ	Կոլտնտեսություններում	Սովխոզներում
1971 թ.	104	100
1975 թ.	114	113
1977 թ.	123	123

ՍՄԿԿ ագրարային քաղաքականության կենսագործման, սոցիալիստական մրցության ծավալման, արտադրության առաջավորների փորձի տարածման ու արմատավորման գործում զգալի աշխատանք կարող էին կատարել արհմիութենական կազմակերպությունները։ Սակայն երկար ժամանակ կոլտնտեսականներին ևս արհմիություններում ընդգրկելու կարևոր հարցին անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում։ «Ամրապնդել արհմիությունների աշխատանքը,— նշել է Վ. Ի. Լենինը,— նշանակում է այն տարածել ոչ միայն գյուղական պրոլետարիատի, այլև ամբողջ աշխատավոր գյուղացիության վրա»[9]։ Ղեկավարվելով լենինյան ցուցումներով, 1976 թ. սեպտեմբերին ՀԱՄԿԽ-ն և գյուղատնտեսության աշխատողների արհմիության կենտկոմը որոշում ընդունեցին կոլտնտեսություններում արհմիութենական կազմակերպությունների դերի մեծացման մասին։ Նշված որոշումից հետո մեր հանրապետության կոլտնտեսություններում, սովխոզներում և գյուղատնտեսական մյուս ձեռնարկություններում եղած 266.496 աշխատողներից արհմիութենական կազմակերպությունների անդամ էին (առ 1-ը հունվարի 1979 թ.) 265.397 մարդ. նրանք գրեթե լրիվ ընդգրկվել էին սոցիալիստական մրցության մեջ[10]։

Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատողներից սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էին (բոլոր աշխատողներիս տոկոսը)[11]։

Գյուղատնտեսական ձեռնարկություններ	1965 թ.	1970 թ.	1975 թ.	1978 թ.
Սովխոզներ	96,2	98,1	98.4	99,5
Կոլտնտեսություններ . .	93,7	96,0	97,2	98,3

8 Նույն տեղում, էջ 71, «Народное хозяйство СССР в 1977 г.» М., 1978, էջ 293։

9 В. И. Ленин, Соч., т. 42, էջ 285։

10 Տվյալները վերցված են ՀՍՍՀ գյուղատնտեսության և մթերումների աշխատողների արհմիության կենտրոնական խորհրդի ընթացիկ արխիվից։

11 Տվյալները վերցված են նույն արխիվից։

Վ. Ի. Լենինը, քննադատելով կապիտալիստական մրցության անազնիվ միջոցները, նշել է սոցիալիստական մրցության տղնիվ, աշխատանքային խանդավառության ոգեշնչման, ետ մնացողներին օգնելու, օրինակելի փորձը սովորեցնելու և առաջավորներին հասնելու մարդասիրական նպատակները. «Մրցությունն ոչ թե գաղանային, այլ մարդկային ձևով»[12],—նշել է Վ. Ի. Լենինը։ Մրցությունն ավելի խթանելու նպատակով 1974 թ. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը սահմանեց «Աշխատանքային փառքի» 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի շքանշաններ։

Հանրապետությունում սոցիալիստական մրցությունն ավելի ծավալելու համար Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԽ-ը 1977 թ. օդոստոսին որոշեցին աշխատանքային ակնառու նվաճումների համար հիմնել Հայկական ՍՍՀ երկու պետական մրցանակ (յուրաքանչյուրը 2.500 ռուբլու չափով) սոցիալիստական մրցության մեջ հաղթող բանվորներին, կոլտնտեսականներին և ինժեներատեխնիկական աշխատողներին երկու տարին մեկ շնորհելու համար։ Այդ պատվին արժանացող անձանց շնորհվում է Հայկական ՍՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչում՝ հանձնելով պատվո նշան և դիպլոմ[13]։ Կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները սոցիալիստական պարտավորությունների հիմքում դնում են պետական պլանը, որի կատարումը պարտադիր է բոլորի համար։

8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին հանրապետության գյուղատնտեսության զարգացման ու ինտենսիվացման խնդիրների ժամկետից շուտ լուծումն ապահովելու համար գյուղում ծավալված սոցիալիստական մրցությունը կյանքի կոչեց աշխատավորների բազմաթիվ նոր նախաձեռնություններ։ 1971—1975 թթ. Հայաստանի գյուղում ծավալված համաժողովրդական սոցիալիստական մրցության մասնակիցների նշանաբանն էր «Հնգամյակի երեք տարվա առաջադրանքները կատարել մինչև 1973 թվականի նոյեմբերի 7-ը», «Գերազանց որակով», «Հանուն առատ հեկտարի», «Հանուն հարուստ ֆերմայի», «Կոմերիտական հոգատարություն անասնապահությանը» շարժումը և այլն։

Գյուղատնտեսության աշխատողների մեջ սոցիալիստական մրցության կազմակերպման ու ոգեշնչման լավ օրինակ են ցույց տալիս Շահումյանի և Կալինինոյի շրջանների կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները։ Գյուղատնտեսության ու մթերումների աշխատողների արհմիության Շահումյանի շրջկոմը և արհմիության տեղական կազմակերպությունները մրցողներին խրախուսելու, նրանց ստեղծագործական ակտիվությունն ու նախաձեռնությունը զարգացնելու նպատակով սահմանել են փոխանցիկ դրոշներ՝ «Առաջավոր կթվորուհուն», «Առաջավոր անասնապահին» և «Առաջավոր այգեգործին» նշանաբանով։ Մրցության արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր ամսվա, եռամսյակի, ապա տարվա վերջին և հաղթողները խրախուսվում են տարբեր միջոցներով և օրինակ ծառայում մյուս աշխատողների համար։ Կալինինոյի շրջանի Շահնազարի սովխոզում սահմանված է «Սովխոզային արտադրության դափնեկիր» կոչում, որը շնորհվում է այն առաջավորներին, որոնք վերջին հինգ տարվա ընթացքում հասել են ամենաբարձր ցուցանիշների։

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 242։

13 «Коммунист», 13.VIII.1977.

Դաշնակիրներին տրվում են վկայականներ, պատվո դիպլոմներ և արժեքավոր նվերներ։ Յուրաքանչյուր տարի սովխոզի առավել աշքի ընկած 10 առաջավորներ պարգևատրվում են Լենինյան վայրեր և հերոս քաղաքներ մեկնելու անվճար տուրիստական ուղեգրերով, որոնք հաղթողներին են հանձնվում Վ. Ի. Լենինի ծննդյան տարեդարձի օրը։

ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. մարտին ընդունած «Միջտնտեսային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման բազայի վրա գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումն է՛լ ավելի զարգացնելու մասին» հանրահայտ որոշումից հետո Հայաստանում մեծացավ ճյուղային արհմիությունների դերը։ Նրանք ավելի սերտ կապեր ստեղծեցին մինիստրությունների հետ և սկսեցին ավելի լրջորեն զբաղվել գյուղատնտեսության ինտենսիվացման խնդիրներով։

Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի (այդ թվում և գյուղատնտեսության) նվաճումներն արդյունք են նաև այն մեծ աշխատանքի, որ կատարվում է հանրապետությունում ժողովուրդների ինտերնացիոնալ կապերի ամրապնդման համար։ Հետագա պլանների և սոցիալիստական պարտավորությունների կատարման ապահովման համար մղվող պայքարում մասսաների ստեղծագործական ակտիվության զարգացման կարևոր միջոց է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Ռոստովի մարզի աշխատավորների սոցիալիստական մրցությունը, որը և՛ առաջավոր փորձի օրինակելի դպրոց է, և՛ նպաստում է աշխատավորների հայրենասիրական ու ինտերնացիոնալ դաստիարակությանը։

Սկսած 1937 թ. սոցիալիստական մրցության մեջ են դտնվում Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղի և եղբայրական Վրաստանի Մախարաձեի շրջանի Նաթանեբի գյուղի կոլտնտեսությունները, իսկ 1963 թ.՝ Հայաստանի Ազիզբեկովի և Ղրիմի մարզի Բախչիսարայի շրջանների աշխատավորները։ Եղբայրացած շրջանների աշխատավորների ներկայացուցիչները պարբերաբար փոխայցելություններ են կատարում, ընդօրինակում միմյանց առաջավոր փորձը, ստուգում պարտավորությունների կատարման ընթացքը, օգնում հաղթահարելու առաջադրանքների կատարման ճանապարհին առաջացած դժվարություններն ու եղած թերությունները։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1967 թ. հունվարին որոշում ընդունեց «Սոցիալիստական մրցության հետագա զարգացման և եղբայրական հանրապետությունների աշխատավորության հետ բարեկամական կապերի ընդլայնման միջոցառումների մասին». որոշումը նոր թափ հաղորդեց հանրապետության առանձին շրջանների, կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատավորների սոցիալիստական մրցությանը։

Եղբայրական ժողովուրդների ինտերնացիոնալ մրցությունը արգասաբեր արդյունքներ է տալիս։ Աշխատավորների յուրաքանչյուր նախաձեռնություն դուրս է գալիս տվյալ ձեռնարկության, կոլտնտեսության, սովխոզի, շրջանի, հանրապետության շրջաններից և ձեռք բերում համաժողովրդական նշանակություն։ Տարբեր ազգային կոլեկտիվների, տնտեսությունների, շրջանների ու հանրապետությունների միջև ծավալված սոցիալիստական մրցության մեջ բոլոր դեպքերում հաղթանակում է սովետական ժողովուրդների բարեկամությունը, նրանց եղբայրությունը։

1973 թ. ձեռք բերած հաջողությունների համար Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի 1800 առաջավորներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով[14]։ Բարձր ցուցանիշների հասած 10 կոլեկտիվներ արժանացան ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի «Իններորդ հնգամյակում ցուցաբերած արիության համար» հուշանշանի և փոխանցիկ կարմիր դրոշի։ Այդ պատվին արժանացան նաև Ախուրյանի և Հրազդանի շրջանները։ «Իններորդ հնգամյակում ցուցաբերած աշխատանքային արիության համար» հանրապետական հուշանշաններով ու կարմիր դրոշներով պարգևատրվեցին 10, փոխանցիկ կարմիր դրոշներով՝ 15 կոլեկտիվներ։ Մրցության 500 առաջավորներ, 150 բրիգադներ արժանացան պատվո դիպլոմների և արժեքավոր նվերների[15]։

1975 թ. օգոստոսի 22-ին հրապարակվեց ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը՝ «ՍՄԿԿ XXV համագումարն արժանավայել դիմավորելու համար սոցիալիստական մրցության ծավալման մասին»[16]։ Այդ որոշումը 1975 թ. սեպտեմբերին ՀԿԿ Կենտկոմը քննարկեց և գործարար միջոցառումներ ձեռնարկեց։ Կենտկոմի որոշումը մեծ նշանակություն ունեցավ աշխատավորության ստեղծագործական նախաձեռնության հետագա դարդացման համար։ Գործարար սոցիալիստական մրցությունը, որը նոր թափով ծավալվեց 10-րդ հնգամյակի սկզբից, ուղղված էր առաջադրված սոցիալ-տնտեսական խնդիրների հաջող կատարման, ՍՄԿԿ XXV և ՀԿԿ XXVI համագումարների որոշումների հետևողական կենսագործման նպատակին։

1977 թ. հունվարի վերջերին ՀԿԿ Կենտկոմը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը, ՀԱՄԿԽ-ը և ՀԼԿԵՄ Կենտկոմը քննարկեցին «Արտադրության արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման, 10-րդ հնգամյակի առաջադրանքների հաջող կատարման համար համամիութենական սոցիալիստական մրցության մասին» հարցը և գործարար որոշում ընդունեցին։ 1977 թ. փետրվարի 8-ին կուսակցական-տնտեսական ակտիվի հանրապետական ժողովում ամփոփվեցին 1976 թ. աշխատանքների արդյունքները։ Նշվեց, որ սոցիալիստական մրցության մեջ գերազանց արդյունքների են հասել Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղի սովխոզը, Անիի շրջանի Մարալիկ, Աբովյանի շրջանի Կոտայք, Արարատի շրջանի Փոքր Վեդի և Վանաշեն, Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղերի կոլտնտեսությունները և ուրիշ շատ կոլեկտիվներ ու համամիութենական սոցիալիստական մրցության մեջ ձեռք բերած հաջողությունների, գյուղատնտեսական մթերքների արտադրության ու պետությանը դրանց վաճառքի ավելացման գործում ցուցաբերած աշխատանքային արիության, 1976 թ. պլաններն ու սոցպարտավորությունները կատարելու համար Հայկական ՍՍՀ 1400 առաջավորներ պարգևատրվել են ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով[17]։ 10-րդ հնգամյակի երրորդ տարվա առաջին օրերին Հայաստանի կոլտնտեսություններում ու սովխոզներում լայնորեն քննարկվեցին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի դիմումը՝ ուղղված սովետական ժողովրդին[18]։ Հանրապետության գյուղատնտ-

---

14 «Սովետական Հայաստան», 28. IV. 1974։

15 «Սովետական Հայաստան», 3 և 4. II. 1977։

16 «Правда», 22.VIII.1975.

17 «Սովետական Հայաստան», 9. II. 1977։

18 «Правда», 14.I.1978.

տեսության աշխատողները 1978 թ. հարվածային աշխատանքի տարի դարձնելու համար նոր, ավելի բարձր պարտավորություններ ստանձնեցին և աշխատանքային պայքար ծավալեցին սոցմրցությունից պատվով դուրս գալու համար։

Հանրապետության աշխատավորների հայրենանվեր աշխատանքի շնորհիվ 10-րդ հնգամյակի առաջին երեք տարիների (1976—1978 թթ.) արդյունքներով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ հաղթելու համար ՀՍՍՀ-ն երեք անգամ անընդմեջ արժանացել է ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԿ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին։ Հանրապետության գյուղի աշխատավորների գործարար սոցիալիստական մրցության և հայրենանվեր աշխատանքի արժանի գնահատականը տվեց ՀԿԿ Կենտկոմի հուլիսյան (1978 թ.) պլենումը, նշելով, որ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո հանրապետության գյուղատնտեսության գրեթե բոլոր ճյուղերում որակական ու քանակական որոշակի տեղաշարժեր են կատարվել։ Հանրային սեկտորում հիմնական արտադրական ֆոնդերն ավելացել են 3,2 անգամ, հասնելով 1.541 մլն. ռուբլու։ Հանրապետությունում գյուղատնտեսության արտադրանքի տարեկան միջին ծավալը, 1961—1965 թթ. համեմատությամբ, 1971—1975 թթ. աճել է 47, իսկ 10-րդ հնգամյակի երկու տարում՝ 75 %-ով, հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը նույն ժամանակամիջոցում ավելացել է 64, մսի արտադրությունը՝ 62, ձվինը՝ 67 %-ով[19]։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը 10-րդ հնգամյակի առաջին երեք տարում հնգամյա պլանով նախատեսված 18,4-ի դիմաց աճել է 22,4 %-ով[20]։

Հայկական ՍՍՀ գյուղական մի շարք շրջաններ, տասնյակ կոլտնտեսություններ ու սովխոզներ այժմ պայքարում են 10-րդ հնգամյա պլանի առաջադրանքները չորս տարում կատարելու համար։ Շատ շրջաններում (Հոկտեմբերյան, Արտաշատ, Էջմիածին, Արարատ, Ախուրյան և այլն) աշխատում են տասնյակ երիտասարդական բրիգադներ, որոնք հարվածային աշխատանքով ակտիվ մասնակցում են «Հնգամյակը 3,5 տարում», «Նույն հողատարածությունից երկու բերք» հայրենասիրական շարժմանը։ Կրասնոսելսկի շրջանի գյուղատնտեսության աշխատողները 10-րդ հնգամյակը սկսեցին «Հնգամյակը չորս տարում, լրացնել 9-րդ հնգամյակի թերակատարումը, աշխատել միայն օգուտով» աշխատանքային նշանաբանով։ Սոցիալիստական մրցություն ծավալելով՝ նրանք գերակատարեցին հնգամյակի առաջին երեք տարիների գրեթե բոլոր պլանային առաջադրանքները։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հավանություն տվեց Կրասնոսելսկի շրջանի գյուղատնտեսության աշխատողների նախաձեռնությանը և գյուղատնտեսության բոլոր աշխատողներին հանձնարարեց պաշտպանել կրասնոսելսկցիների հայրենանվեր նախաձեռնությունը, կոնկրետ միջոցառումներ մշակել մսի, կաթի և մյուս մթերքների արտադրությունը և պետությանը դրանց վաճառքն ըստ ամենայնի ավելացնելու համար[21]։

ՀՍՍՀ գյուղի աշխատավորները 1978 թ. անբարենպաստ եղանակի պայմաններում բնության քմահաճույքներին հակադրեցին իրենց եռանդն ու վարպետությունը և հասան բարձր արդյունքների։ Նրանք հացամթերման առաջա-

19 «Սովետական Հայաստան», 19. VII. 1978։

20 Նույն տեղում, 14. IV. 1979։

21 «Коммунист», 5. XI. 1977.

դրանքը կատարեցին 117,5 %-ով, գերակատարեցին խաղողի, բանջարեղենի արտադրության առաջադրանքներն ու սոցպարտավորությունները, ավելացրին գյուղատնտեսական մյուս կուլտուրաների, մսի, կաթի, ձվի, բրդի արտադրությունը, դրանց վաճառքը պետությանը և անասունների գլխաքանակը։ Հայկական ՍՍՀ-ում 1978 թ. նախատեսվածից ավելի մթերվեց 20 հազար տոննա խաղող, 11 հազար տոննա հացահատիկ, 21 հազար տոննա բանջարեղեն, 14 հազար տոննա շաքարի ճակնդեղ և այլն[22]։

Տասներկու տարվա (1965—1977 թթ.) ընթացքում, չնայած կլիմայական մի շարք անբարենպաստ տարիների, հանրապետության գյուղատնտեսության աշխատողների ծավալած սոցիալիստական մրցության և հայրենանվեր աշխատանքի շնորհիվ հացահատիկային տարածությունների յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունն ավելացել է 7,4, շաքարի ճակնդեղինը՝ 98, կարտոֆիլինը՝ 21, իսկ բանջարեղենինը՝ 32 ցենտներով[23]։ 1965 թ. կոլտնտեսությունները ու սովխոզները խաղողի հեկտարից ստացած 40 ցենտների դիմաց 1970 թ. ստացել են 42,6, իսկ 1978 թ.՝ 80 ցենտներ խաղող։ Հաջողությունների են հասել նաև հանրապետության կոլտնտեսությունների ու սովխոզների անասնապահները[24]։

1979 թ. հունվարի վերջին հրավիրված կուսակցական, սովետական, արհմիութենական ու կոմերիտական հանրապետական ակտիվի ժողովը (որը և սոցիալիստական նոր պարտավորություններ սահմանեց ընթացիկ տարվա համար) նշեց, որ նախորդ տարում ստանձնած պարտավորությունների կատարման պայքարում ավելի աչքի ընկան Արարատի, Հրազդանի, Նաիրիի և Սղեգնաձորի շրջանների աշխատավորները։ Այդ հաջողություններն ավելին կլիներին, եթե ամենուրեք սոցմրցումը լավ կազմակերպվեր։ Նշվեց, որ հաճախ է պատահում, երբ միևնույն հողակլիմայական պայմաններում գտնվող հարևան տընտեսություններն ունենում են տարբեր ցուցանիշներ։ Դրա հիմնական պատճառը աշխատանքի կազմակերպման մեջ է, սոցիալիստական մրցության գործնականության մեջ։

Կոմունիստական կուսակցությունը, սովետական պետությունը բարձր են գնահատում սովետական մարդկանց հայրենանվեր աշխատանքը։ 1958—1973 թվականների տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում ձեռք բերած հաջողությունների համար մեր հանրապետությունը պարգևատրվեց հինգ շքանշաններով։ Այդ հաջողությունների մեջ իրենց արժանի վաստակն են ներդրել նաև Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները։ Դաշտավարության և անասնապահության բնագավառում բարձր ցուցանիշների հասնելու համար հանրապետության գյուղական 22 շրջաններ կուսակցության ու կառավարության կողմից զանազան ձևով խրախուսվել են։ Դրանցից են Ախուրյանի և Արթիկի շրջանները (հացահատիկի գծով), Շամշադինի և Իջևանի շրջանները (ծխախոտի գծով), Կալինինոյի և Շահումյանի շրջանները (անասնապահության գծով) և այլն։ Անընդհատ խտանում են հանրապետու-

22 «Սովետական Հայաստան», 7. I. 1979։

23 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվից և «Народное хозяйство СССР в 1977 г.» ժողովածուից (М., 1978. էջ 229, 233, 235, 236, 268, 269)։

24 Նույն տեղում։

թյան ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրված գյուղատնտեսության սարգկանց շարքերը։

10-րդ հնգամյակի երրորդ տարվա պլանային առաջադրանքներն ու սոցիալիստական պարտավորությունները գերակատարելով՝ հանրապետության մի խումբ շրջաններ, կոլտնտեսություններ ու սովխոզներ գարձան համամիութենական սոցիալիստական մրցության հաղթողներ և պարգևատրվեցին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի ու ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշներով։ Պարգևատրվածների շարքերում են Արարատի ու Հրազդանի շրջանները, Արովյանի շրջանի Ակունք գյուղի կոլտնտեսությունը, Հոկտեմբերյանի շրջանի «Արաքս» և Կրասնոսելսկի շրջանի Արծվաշեն գյուղի սովխոզների կոլեկտիվները։ ԱՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշներով պարգևատրվեցին և ՍՍՀՄ ժողտնտնվաճումների ցուցահանդեսի համամիութենական պատվո ատեստակին գրանցվեցին Նոյեմբերյանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր «Հայաստան» սովխոզի և Արովյանի շրջանի Հոսունի գյուղի կոլտնտեսության կոլեկտիվները[25]։

Սովետական Հայաստանի 58-րդ տարեդարձի օրը հրապարակվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումը՝ գյուղատնտեսական աշխատանքում 1978 թ. ձեռք բերած ակնառու նվաճումների համար սոցիալիստական մրցության 8 առաջավորների Հայկական ՍՍՀ 1978 թ. պետական մրցանակներ շնորհելու մասին[26]։

Հայաստանի գյուղի աշխատավորները հաջողությամբ կենսագործելով ՍՄԿԿ XXV համագումարի որոշումները, շարունակում են ծավալել գործարար մրցություն՝ հարազատ պետությանն ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ ու հումք հանձնելու համար։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ДЕРЕВНЕ (1965—1978 гг.)

ИСРАЕЛ ХАЧАТРЯН

Резюме

Коммунистическая партия Армении в указанный период в числе целого ряда мероприятий, обеспечивающих успехи развития сельского хозяйства республики, придавала большое значение и социалистическому соревнованию как могучему средству развития творческой инициативы масс. Для выполнения социалистических обязательств в 1965—1978 гг. много усилий и труда вложили хлеборобы Анийского, Ахурянского, Варденисского, Сисианского районов, овощеводы Эчмиадзинского, Араратского, Арташатского Октемберянского, свекловоды Ахурянского, Спитакского, животноводы Наирийского, Калининского, виноградари Октемберянского, Талинского, Ноемберянского, Эчмиадзинского, Иджеванского и Ехегнадзорского районов.

25 «Коммунист», 11.II.1979.

26 «Սովետական Հայաստան», 29. XI. 1978։

После мартовского (1965 г.) Пленума ЦК КПСС, положившего начало новому этапу развития ленинской аграрной политики партии, сельское хозяйство СССР, в том числе Арм. ССР, в экономическом и социальном отношении сделало крупные шаги вперед.

Событием огромного исторического значения в деятельности КПСС, в жизни всего советского народа явился июльский (1978 г.) Пленум ЦК КПСС. Он сосредоточил внимание на решении наиболее актуальных проблем сельскохозяйственного производства, повышении эффективности использования капитальных вложений, мобилизации трудящихся на успешное выполнение заданий, намеченных XXV съездом КПСС.

По итогам первых трех лет (1976—1978 гг.) X пятилетки Армянская ССР три года подряд была признана победителем во Всесоюзном социалистическом соревновании и трижды награждалась переходящим Красным знаменем ЦК КПСС, Совета Министров СССР, ВЦСПС и ЦК ВЛКСМ.